

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՑ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ

ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒՆ

1932

Հունիս 28

364

Մ-16


364
Մ-16

1

361.43
Փ10.0

**ՄԱԼԱԹԻՈՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱՃԻԻՂԵՐՈՒՆ**

25-րդ ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԷՆ ՄԻՆՁԵՒ 28-րդ
ՊԱՏԳՄ. ԺՈՂՈՎԸ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



1. 25-րդ Պատգամաւորական Ժողովի նա-
խօրեակին, 1927-ին, Ընկերութեանս տան վը-
րայ մօրկէյճ առնուած 22,000.00 տոլարի փու-
խարէն՝ 20,968.67 տոլար գրուած է արձանա-
դրութեան մէջ:

2. Վալէնտի Տիկնանց Մասնաճիւղէն ի հա-
շիւ անդամատուրքի, 26-րդ Պատգամաւորա-
կան Ժողովի արձանագրութեան մէջ փոխան
116 տոլար 10 սէնթի 16 տոլար 10 սէնթ արձա-
նագրուած է:

1. Ֆիլատէլֆիոյ 25-րդ Պատգամաւորա-
կան Ժողովին՝ Կեդրոնական Վարչութեան Է-
տենապետ Պր. Գրիգոր Խանձեան, կանոնադրի
հակառակ ինքը ստանձնեց երկու ձայներ քեմ-
տընի եւ Տիթրոյթի Արանց Մասնաճիւղերէն
զրկուած, որոնց անդամատուրքներու վճարն
ալ նշանակուած չէ արձանագրութեան մէջ:

Նոյնպէս առանց անդամատուրքերը նշա-

նակուելու 25-րդ Պատգամաւորական ժողովի արձանագրութեան մէջ հետեւեալ մասնաճիւղերուն եւ անոնց իրաւասու ներկայացուցիչները եղած են հետեւեալ անձինք:

2. Հալէպի (արտասահմանի) արանց Մասնաճիւղին ներկայացուցիչ Տիկ. Վարդանուշ Փապուճեան:

3. Պէյրութի արանց Մասնաճիւղին ներկայացուցիչ Տիկ. Եղիսաբեթ Մարտիկեան:

4. Պօլէն (Ֆրանսա) Կանանց Մասնաճիւղին ներկայացուցիչ Պր. Խաչատուր Պօյաճեան: Վաւերացուած են հետեւեալ չորս մասնաճիւղերը առանց անդամատուրք վճարելու:

Փրավիտէնսի 26-րդ Պատգամաւորական ժողովը՝ առանց անդամատուրքի վաւերացուցած է հետեւեալ մասնաճիւղերը:

1. Ֆիլատէլֆիոյ արանց մասնաճիւղի ներկայացուցիչ Պ. Մանուէլ Ստեփանեան:

2. Լիօնի Արանց Մասնաճիւղի ներկայացուցիչ Պ. Նշան Կանանեան:

3. Քէմարնի Արանց Մասնաճիւղին ներկայացուցիչ Պ. Յով. Թայեան:

4. Լիօնի Կանանց Մասնաճիւղի ներկայացուցիչ Մ. Պալըզճեան:

27-ՐԴ ՊԱՏԳԱՄԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

1. 27-րդ Պատգամաւորական ժողովի արձանագրութեան մէջ Ֆիլատէլֆիոյ Արանց

Մասնաճիւղին անդամավճարը նշանակուած է, եւ որը մէկ ձայնով ներկայացուցեր է Պր. Մանուէլ Ստեփանեան:


2. Նիւ Եօրքի Տիկնանց Մասնաճիւղի առեւնապետուհին, Տիկին Վարդանուշ Փապուճեան, առանց ընտրուելու իր մասնաճիւղէն, անպաշտօն կերպով որպէս պատգամաւոր, ներկայացաւ 27-րդ Պատգամաւորական ժողովին:

3. Պր. Արմենակ Ոսկերիչեան 1920 թիւին պաշտօնապէս հրաժարած ըլլալով ընկերութեանէ, 27-րդ Պատգամաւորական ժողովին, երկու ձայնով վաւերացուցաւ իբրեւ օրինաւոր պատգամաւոր, որպէս Վալէնսի Արանց Մասնաճիւղի ներկայացուցիչ:

4. 27-րդ Պատգամաւորական ժողովին մէջ յարաբերական թղթակցութեանց քննիչ յանձնախումբին տեղեկագրութիւնը անյայտացաւ ատենապետի սեղանին վրայէն, անոր տեղ չինծու բանաձեւ մը ղետեղուած է յանձնախումբի անունով, 27-րդ Պատգամաւորական ժողովի արձանագրութեան մէջ:

5. 27-րդ Պատգամաւորական ժողովի մէջ ատենապետի թելադրութեամբ 13 ձայնով բողոք մը բարձրացաւ ընդդէմ 16 ձայնի, Պր. Մ. Ասլանեանին չաբաթավճարին կրճատման մասին, փոխանակ 25 տուար չաբաթավճարի՝ 15 տուար վճարել: Յիշեալ 16 ձայներու 3 ձայնը

1528-42



2737-2011

ապօրինի ըլլալը եւ մէկ ձայնին ալ աւելի ըլլալը ցոյց կուտայ 27-րդ Պատգամաւորական ժողովի արձանագրութիւն եւ անդամավճարի հաշիւը:

6. 27-րդ Պատգամաւորական ժողովի նախօրեակին՝ Պր. Գրիգոր Խանձեանէն երեք տարուայ անդամավճար մէկէն դանձուելով պատգամաւոր ընտրուած է:

27-րդ Պատգամաւորական ժողովի մէջ եղած բոլոր սխալները նոյն ժողովին ատենապետ Պր. Աւետիս Աւետիսեանի, նոյնպէս Կեդրոնի վրայ կը ծանրանայ:

ՎԻԶԱՆՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

1. 1930 Մայիս 21ին, ըստ Կեդրոնական Վարչութեան շրջաբերականին, Հալէպէն երկու երիտասարդներ, Պր. Լեւոն Եղիշեան եւ Պր. Սիմոն Ասլանեան Փ. Լօթի չողենաւով ճամբայ ելան Պոլսոյ վրայէն դէպի Նոր Մալաթիա երթալու, յիշեալները 15 օրէն աւելի Պոլսոյ առջեւ ջուրերու վրայ նաւերու մէջ սպասելէ յետոյ, Պր. Մ. Ասլանեանի կողմանէ ետ զրկուեցան դէպի Հալէպ, իրենց առջի տեղը: Ինչո՞ւ:

2. 1930 Յունիս 15, ըստ Կեդրոնական Վարչութեան շրջաբերականին, 26 անձեր՝ Պր. Մ. Ասլանեանի եւ Կեդրոնական Վարչութեան գիտակցութեամբ եկան Տրապիզոն, իբրեւ պատուատ վիզա ունեցողներ: Յիշեալները 7 ամիս

Տրապիզոն տառապելէ յետոյ եւ առանց ստանալու իրենց հեռագիրներուն եւ նամակներուն պատասխանը Պր. Մ. Ասլանեանէ, յուսախար ստիպուած դիմած են Թուրք կառավարութեան, որմէ արտօնութիւն ստանալով՝ վերադարձած են հին Մալաթիա: Սակայն երիտասարդները զինուոր տարուած են, իսկ օրիորդները բռնիօրէն ամուսնացուած են Թուրքերու հետ:

Յարգելի հայրենակիցներ, Պր. Մ. Ասլանեան պաշտօնի կանչուելէ ի վեր իւրաքանչիւր տարի, Պատգամաւորական ժողովի նախօրեակին, հարիւրներով երկու-հարիւրներով, երեք հարիւրներով, մինչեւ վեց հարիւրներով Վիզաներ կը ծանուցուէր հեռադաւ Կեդրոնական Վարչութեան, եւ Կեդրոնական Վարչութիւնն ալ Պատգամաւորական ժողովի. սակայն ոեւէ մէկը չի իրագործուեցաւ: Փաստերը եկան ցոյց տալու, որ Պր. Մ. Ասլանեան ոեւէ կերպով ջանք չէ թափած վիզաներ առնելու եւ մարդ տանելու:

4. 1930 Հոկտ. 24ի՝ 27-րդ Պատգ. ժողովէն յետոյ, առաջին շրջաբերականով յայտարարեցին 70 անձերու վիզաներուն վաւերացումը, հին Մալաթիա գտնուողներէն: Յիշեալ վաւերացումած անուներէն կէսին չափ արդէն 3 տարիներէ ի վեր Հայաստան, Նոր Մալաթիա ըլլալին կը վաւերացնէ, 1930 Յունվար 27, թիւ 4

չըջաբերականը: Նաեւ յիշեալներէն ոմանք ազգական եւ ծանօթ են Կեդրոնական Վարչութեան անդամներուն: Ամէն մէկ մականունը քանի մը մականունի վերածելով բազմապատկած են անդամները: Սիրելի հայրենակիցներ, ի՞նչ նպատակ կամ ի՞նչ զաղափար կը ստիպէ զանոնք այս տեսակ անհասկնալի դարձուածքներ ընելու:

Ես անհատապէս ներկայանալով Ուստրի 28-րդ Պատգամաւորական Ժողովին, 3 տարիներէ ի վեր սիրտիս ցաւ եւ խղճիս խայթ եղած ընկերութեանս աննպաստ գործունէութեան մասին՝ անձամբ արտայայտուելու, սակայն Պատգամաւորական Ժողովին մէջ, կը ցաւիմ ըսելու, որ չորս օրեր սպասելէ յետոյ, թէ՛ զրաւոր եւ թէ՛ անհատական առաջարկս մերժուող՝ պատեհութիւն չտրուեցաւ մասնաւոր արտայայտուելու:

Պր. Մ. ԱՍԼԱՆԵԱՆԻ ՇԱԲԱԹԱՎԱՃԱՐԸ

1. Պր. Մ. Ասլանեանի առաջին անգամ ընտրուելուն 20 տուար որոշուեցաւ իւր շաբաթավճար: Ութը ամիսներ յետոյ, 26-րդ Պատգամաւորական Ժողովին 25 տուարի բարձրացաւ շաբաթավճարը, խորհելով թէ Պր. Մ. Ասլանեանը Նոր Մալաթիոյ սիւնը պիտի ըլլայ, իր անունը յաւերժացնելով: Սակայն կը ցաւինք ըսելու, որ բոլոր Մալաթիացիներու զոհողու-

թիւնը ի դերեւ հանելէ վերջ, փաստերը եկան ցոյց տալու թէ՛ Պր. Մ. Ասլանեանը սկիզբէն մինչեւ 28-րդ Պատգամաւորական Ժողովը փոխանակ 25 տուարի, 45 տուար շաբաթավճար առած է:

2. 28-րդ Պատգամաւորական Ժողովի արձանագրութեան ամենավերջի հաշուեցոյցը 4-էն 8 հազար տուարի տարբերութիւն մը կայ, որ այս էջին մէջ պիտի ծանօթանաք: Հայաստանի Պր. Մ. Ասլանեանին դացած գումարը որ արձանագրութիւններէն մի առ մի քաղած ենք հետեւեալ կերպով. — Հայաստան դացած ընդհանուր գումարն է \$70,898.35:

Հայաստանի մէջ Պր. Ասլանեանին հասած կանխիկ գումարն է՝ \$61,200.00:

3. Այս վերոյիշեալ գրուածքներուն պատասխանատու եմ եւ կը փաստեմ Կեդրոնական Վարչութեան արձանագրութիւններով եւ շրջաբերականներով, անոնք որ կը փափաքին լուսարանուիլ՝ ես պատրաստ եմ:

Իսկ Կեդր. Վարչութեան մեզ ներկայացուցած ընդհանուր հաշիւն է հետեւեալը. — \$66,753.05, \$56,753.05 կանխիկ գումար Պր. Մ. Ասլանեանի:

Այս վերջինին սխալ ըլլալը կը փաստուի Կեդրոնական Վարչութեան մեղի ներկայացուցած իրարմէ տարբեր չորս հաշուեցոյցներէն,

որոնք զիրար կը հակասեն :

Օ՛հ , ուրեմն յարգելի հայրենակիցներ ,
1932 Ապրիլ 10-ին բացառիկ Պատգամաւորական
Ժողովի հրաւիրուած ենք , Կեդրոնական Վար-
չութեան կողմանէ , լուկ Կանոնադրի փոփոխու-
թեան համար , որոնց նպատակն է այս վաւե-
րական Միութիւնը անվաւեր դարձնել : Որոշ
կերպով պիտի տեսնենք մութ նպատակնե-
րու յառաջացումը եւ ապա անկումը այս Մի-
ութեան : Այսպէս ըլլալու առիթը կ'ընծայէ Կա-
նոնադրի փոփոխումը վաւերականութենէ դուրս
գալու :

Ուրեմն բոլոր Մասնաճիւղեր եւ գիտակից
հայրենակիցներ թող բարեհաճին ներկայ դըս-
նելիլ այս բացառիկ Պատգամաւորական Ժողո-
վին , որ միասնաբար խորհելով՝ կարողա-
նանք շտկել անցեալի մէջ գործուած՝ դերու-
թիւնները , խաւարի տեղ լոյս , անշարժութեան
տեղ՝ գործ եւ կեանք ներմուծելու : Եթէ կ'ու-
ղէք որ ապրի 28 տարիներէ ի վեր կազմակեր-
պուած այս Միութիւնը :

Ընկերական Յարգանքներով ,
Մալաթիոյ Կրթասիրաց Միութեան Նիւ
եոբքի Տիկնանց Մասնահիւղի
Անդամուհիներէն
Տիգրիւ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

ՄԱՐԻՆ ՆԵՐՍԷՍ ՇԻՆՈՐՀԱՆԻ
ST. NERSES SHINORHAN
LIBRARY

Հայաստանի Ազգային գրադարան



NL0434579

